ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

# ԷՄՄԱ ԱԽՏՅԱՆ. «ԿՈՒԶԵԻ, ՈՐ ՎԻՐԱՀԱՅԸ, ԲԱՑԻ ՆՐԱՆԻՑ, ՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԻՐԱՊԵՏԻ ՎՐԱՑԵՐԵՆԻՆ, ՆԱԵՎ ԳԵՐԱԶԱՆՑ ՏԻՐԱՊԵՏԻ ՀԱՅԵՐԵՆԻՆ»



*Օրերս նրան այցելեցին իր նախկին ուսանողները: Եկել էին ավագ բարեկամի հետ շփվելու, մտերմիկ խոսք ու զրույցի համար, երբ հարգանքը տարրալուծվում է սրտի թելերով ամրացած վստահությանը:*

*Պարզ ու շիտակ, նրբանկատ ու թափանցող, անդավաճան ու հուսալի լինելու մարդկային որակներն իրենց անխառն դրսեւորումներով, այսօր ամբողջացնում են վիրահայ կրթահամակարգի ճանաչված գործիչ, «Արեւիկ» մանկապատանեկան պարբերականի հիմնադիր-խմբագիր (2003), նույնանուն բարեգործական հիմնադրամի ու «Վրաստանում հայկական գիտահետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպության հիմնադիր-նախագահի, գրականագետ, պրոֆեսոր Էմմա Ախտյանի համընդհանուր հարգանք վաստակած նկարագիրը: Մարդու, ում կյանքի ուղին, ի տես բոլորի, մտավորականին վայել մասնագիտական ու հոգեւոր աճի ճանապարհ է...*

*Էմմա Ախտյան մտավորականի արգասավոր ուղին արժեւորվել է Վրաստանի քաղաքացիական բարձրագույն «Պատվո շքանշանով», Հայաստանի գիտության եւ կրթության նախարարության «Ոսկե մեդալով», Հայաստանի սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալով, Վրաստանի եւ Հայաստանի նախագահների, Վրաստանում Հայաստանի դեսպանի մի շարք շնորհակալագրերով: Եվ շնորհակալ այդ ճանապարհին այսօր նա շարունակում է նոր սպասումներով...*

*Ծննդյան հոբելյանական տարելիցի առթիվ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում մեր հարցազրույցը Էմմա Ախտյանի հետ:*

***- Տիկին Էմմա, «Վրաստան» թերթը սրտանց շնորհավորում է Ձեզ ծննդյան օրվա կապակցությամբ, ցանկանում` քաջառողջություն, կյանքի երկա՜ր ու խաղաղ ճանապարհ:***

***Ընդհանրապես, ինչպե՞ս է Էմմա Ախտյանը վերաբերվում հոբելյաններին:***

- Խորապես զգացված եմ «Վրաստան» թերթի ուշադրության համար, թերթ, որն այս տարի բոլորում է իր գոյության 100-ամյակը: Ընդունենք, որ Սփյուռքում պարբերականի 100 տարի անընդմեջ գոյատեւումը մեծ հաղթանակ է: Եվ դա միայն թերթի հաղթանակը չէ, այլ նաեւ մեր` ընթերցողներիս հաղթանակն է, առանց որոնց թերթի գոյությունն անիմաստ է, ավելին, առանց որոնց պարբերական լինել չի կարող: Իմ խորին երախտիքը «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանին: Ի դեպ, վերջերս նաեւ նրա ծննդյան օրն էր. վիրահայ ընթերցողների անունից նրան քաջառողջություն ու ակտիվ ազգապահպան գործունեություն եմ մաղթում: Իմ շնորհակալությունը նաեւ ողջ խմբագրական կազմին, ում աշխատանքն արժանի է էլ ավելի բարձր գնահատանքի բոլորի կողմից:

Ինչ վերաբերվում է հոբելյանների մասին իմ կարծիքին, պետք է անկեղծ ասեմ` չեմ ընդունում դրանք, ավելի ընդունում եմ ետմահու հոբելյաններ (հուշ-երեկոներ), թատրոնների, այլ մշակութային կենտրոնների, պարբերականների հոբելյանական երեկոներ...

***- Դուք մասնագիտական քրտնաջան ուղի եք անցել` հայոց լեզվի ու գրականության երկարամյա դասախոս Թբիլիսիի Ա.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի (այժմ` Իլիայի համալսարան) հայկական բաժնում, ապա` նույն ամբիոնի վարիչ, թեկնածուականի պաշտպանություն Երեւանի Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, Խորհրդային Միության Բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի շնորհած դոցենտի կոչում (1983թ.), պրոֆեսորի պաշտոն... Ի՞նչն է Ձեզ համար նման ներուժի աղբյուր ծառայել:***

- (*ժպտում է*): Երեւի` բարոյական պարտքի մշտակա գիտակցությունը, գուցեեւ ըմբռնումը նրա, որ սերունդ դաստիարակող մանկավարժի մասնագիտությունը հավուր պատշաճի երկրին ծառայեցնելու համար, հարկավոր է սիրտ դնել գործի մեջ, կամ պարզապես սպառհսպուռ նվիրումը...

***- Ավարտելով մայրաքաղաքի Հավլաբար թաղամասում գտնվող թիվ 92 դպրոցը, անմիջապես ընդունվում եւ 1966 թվականին ավարտել եք Թբիլիսիի Ա.Պուշկինի անվան պետական մանկավարժական ինստիտուտը: Ապա նույն բուհի ընտանիքի անդամ դառնալով` Ախտյան դասախոսն իր ծանրակշիռ ավանդը ներդրեց երկրի հայկական դպրոցները հայոց լեզվի ու գրականության մասնագետներով ապահովելու նրանց շնորհակալ գործին: Նրա ձեռքի տակ աճեցին երկրի տարբեր գյուղերից ու քաղաքներից եկած հարյուրավոր հայ երիտասարդներ...***

- Այդ հարյուրավոր երիտասարդները, ավարտելով իրենց ուղեցույց բուհը, զգալի դեր կատարեցին մեր մատաղ սերնդի մեջ երկրի հանդեպ սիրո ու ազգային ոգին պահելու խնդրում: Հենց այդ շրջանավարտներն են Վրաստանում գործող հայկական կրթական ու մշակութային կենտրոնների այսօրվա պատասխանատուները: Նրանց շարքերից են աճել վիրահայ գրականության, մշակույթի, մամուլի ու այլ ոլորտների բազում աչքի ընկնող գործիչներ, որոնցից շատերն արժանի ճանաչում են ձեռք բերել` որպես այդ բնագավառների առաջատարներ Վրաստա-

(Շարունակությունը` 6-րդ էջում)

COVID - 19.

# ԴՊՐՈՑ. ԻՆՉՊԻՍԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՊԵՏՔ Է ԱՊԱՀՈՎԵՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ

*Դեռեւս նախորդ տարվա դեկտեմբերին Չինաստանում բռնկված կորոնավարակը աստիճանաբար տարածվեց աշխարհի բազմաթիվ երկրներում:*



Մեզ մոտ` Վրաստանում, COVID-19-ի առաջին դեպքը գրանցվել էր ս.թ. փետրվար 26-ին, սակայն վարակի դեմ պայքարում մեր երկիրը դարձավ այն առաջին երկրներից մեկը, որտեղ իրականացվեցին խիստ կանխարգելիչ միջոցառումներ: Կորոնավարակով հիվանդների կառավարման հաջողված ռազմավարության շնորհիվ նվազագույնի է հասցվել աշխարհում վարակակիրների թիվը, եւ համավարակաբանական տեսակետից Վրաստանն ընդգրկել է անվտանգ կամ այսպես կոչված «կանաչ» երկրների ցանկում:

Ասենք նաեւ, որ համավարակի պատճառով աշխարհի 186 երկրներում դադարեցվեց ուսումնական գործընթացը: Բացառություն չէր նաեւ Վրաստանը: Ընթերցողին հիշեցնենք, որ սեպտեմբերի 15-ից նախատեսվում է վերսկսել դասերը: Վրաստանի բռնազավթված տարածքներից փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարությունը, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հետ համագործակցությամբ, մշակել է մի շարք հանձնարարականներ, որոնց կատարումը պարտադիր է ուսումնական բոլոր հաստատությունների համար:

Եվ այսպես, այդ հանձնարարականները նախատեսում են հետեւյալը.

* աշակերտների միջեւ 1 մետր հեռավորության պահպանում,
* շենք մտնող ցանկացած անձ պարտադիր պետք է դիմակ կրի, բացի աշակերտներից,
* շենք մտնող ցանկացած անձ պեիք է ջերմաչափվի, ձեռքերը ախտահանի եւ անցնի ախտահանիչ գորգի վրայով,
* դիմակների պահուստային պաշարի առկայություն դպրոցում,
* յուրաքանչյուր դասամիջոցից հետո, սանհանգույցների սանիտարական մշակում,
* հերթափոխերի միջեւ կես ժամանոց ընդմիջում, դասասենյակների եւ դպրոցի ընդհանուր օգտագործման տարածքի սանիտարական մաքրում, օդափոխություն,
* ջերմող կամ շնչառական ախտանիշներ ունեցող աշակերտների առանձնացում ժամանակավոր մեկուսուցման սենյակում,
* դասամիջոցներին` սենյակների օդափոխում,
* հաճախ շոշափվող մակերեսների սանիտարական մշակում,
* դպրոցի ընդհանուր օգտագործման տարածքներում (միջանցք, սանդղահարթակ, ուսուցչանոց եւ այլն) գտնվելիս կամ տեղաշարժվելիս` յուրաքանչյուր անձ (բացի աշակերտներից) պետք է կրի դիմակ, այդ թվում` նաեւ դասամիջոցներին:

Ելնելով վերը նշված կանոնակարգերից` կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարությունը (ԿԳՄՍ), հաշվի առնելով յուրաքանչյուր դպրոցի առանձնահատկությունն ու ենթակառուցվածքը, մշակել է հանձնարարականներ, որոնք դպրոցներին հնարավորություն կտան ծրագրել ուսումնական գործընթացը: Ըստ այդմ, դպրոցները հնարավորություն կունենան.

* ինքնուրույն սահմանել դասերի տեւողությունը (առնվազն 30 րոպեանոց),
* սահմանել ուսումնական գործընթացը սկսելու ժամանակը` ըստ աստիճանների/դասարանների (ժամը` 08:30-ին, 08:45-ին, 09:00-ին),
* սահմանել եւ ճկունությամբ կազմակերպել հերթափոխը,
* անհրաժեշտության դեպքում, միահերթ դպրոցները կարող են անցնել մի քանի հերթանոց մոդելի, եւ տարբեր աստիճանների աշակերտները հաճախեն դպրոց ըստ հերթափոխի,
* դպրոցները, հաշվի առնելով աշակերտների անվտանգությունն ու ենթակառուցվածքը, կարող են ներդնել խառը (այսպես կոչված հիբրիդային մոդել, որը ենթադրում է ինչպես դասարանային, այնպես էլ` հեռավար ուսուցում) ուսուցման սեփական մոդել,
* բեռնաթափման նպատակով, անհրաժեշտության դեպքում, որպես ուսումնական օր կարելի է կիրառել շաբաթ օրը:

Ուշադրություն. Վրաստանի ԿԳՄՍ նախարարությունը I-IV դասարանների աշակերտների համար սահմանել է դասերի պարտադիր անցկացումը դպրոցի տարածքում:

Դպրոցի տնօրինության կողմից, անհրաժեշտության դեպքում, խառը տիպի մոդելի ներդրման դեպքում V-VI դասարաններում հեռավար կրթությունը կարող է լինել շաբաթը առնվազն 1 օր, VII – XI դասարաններում` առնվազն 2 օր, XII դասարանում` 3 օր: Խառը մոդելի ներդրումը պետք է համաձայնեցված լինի կրթության նախարարության եւ կրթական ռեսուրս-կենտրոնների հետ:

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

«ՖԻՆԿԱ» ԲԱՆԿԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է

# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԻ ԱԿՑԻԱՆ

*«Ֆինկա» բանկում շարունակվում է վարկային սահմանաչափի ակցիան: Ակցիայի շրջանակներում, արդեն մինչեւ հարյուր ակտիվ հաճախորդ ստացել է դրամական պարգեւներ. դուք դեռ հնարավորություն ունեք միանալու մեզ եւ ստանալու լրացուցիչ օգուտ:*




Ակցիայի պայմանները հետեւյալն են. եթե մինչեւ սեպտեմբերի 15-ը վերցնեք վարկային սահմանաչափ եւ օգտագործեք գումարի առնվազն կեսը, ավտոմատ կերպով կներգրավվեք ակցիայի մեջ: «Ֆինկա» բանկն ամեն ամիս ներկայացնելու է ամենաակտիվ 100 հաճախորդին եւ նրանց հաշվին` որպես նվեր, կվերադարձվի մինչեւ 100 լարի: Ակցիայի պայմանները վերաբերում են նաեւ այն հաճախորդներին, ովքեր արդեն ունեն «Ֆինկա» բանկի վարկային սահմանաչափ:

«Ֆինկա» բանկի այս սպասարկումը եզակի է շուկայում: Ակցիայի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն ստանդարտ կրեդիտ քարտի, վարկի սահմանաչափի ամսավճարը հստակ ամրագրված է, եւ կապված չէ ծախսված գումարի հետ: Անկախ օգտագործված գումարից, հաճախորդներն ամեն ամիս կվճարեն նույն գումարը:

Վարկային սահմանաչափի առավելագույն գումարը 4000 լարի է, գումարը քարտի վրա է, եւ հաճախորդը կարող է այն հեշտությամբ կառավարել ցանկացած վաճառակետում:

Վարկային սահմանաչափը տրվում է եկամուտ ունեցող անձանց (եկամտի հաստատման պաշտոնական ապացույց չի պահանջվում):

Վարկային սահմանաչափ ձեւակերպելու համար կարող եք դիմել FINCA Bank-ի սպասարկման կենտրոններ Վրաստանի 32 քաղաքներում լրացնելով հայտը կամ զանգահարելով` 4949:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

# ԷՄՄԱ ԱԽՏՅԱՆ. «ԿՈՒԶԵԻ, ՈՐ ՎԻՐԱՀԱՅԸ, ԲԱՑԻ ՆՐԱՆԻՑ, ՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԻՐԱՊԵՏԻ ՎՐԱՑԵՐԵՆԻՆ, ՆԱԵՎ ԳԵՐԱԶԱՆՑ ՏԻՐԱՊԵՏԻ ՀԱՅԵՐԵՆԻՆ»

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

նում եւ նրա սահմաններից դուրս:

Ավելի մեծ վարձատրություն դժվար է պատկերացնել, եւ ես շնորհակալ եմ ճակատագրին նման վարձատրության համար:

***- Իմաստունները կյանքի արժեք են համարում լավ օրինակը. Ձեր կարծիքն այդ մասին:***

- Անշուշտ, լավը միշտ էլ օրինակելի է, եւ ցանկացած լավ օրինակ կյանքի համար ինքնին որեւէ արժեք է ներկայացնում:

***- Դուք հեղինակ եք շուրջ 100 գիտական հոդվածների, թեզիսների, զեկուցումների, «Միքայել Ախտյան» («Բանաստեղծի ժողովածուների հետքերով» մենագրության: Այդ թվում կազմել եք Նիկողայոս Մամիկոնյանի «Այգեպանի կտակը» անտիպ առակների ժողովածուն, մատենագրել՝ 20-րդ դարի երկրորդ կեսի վիրահայ գրականագետ Արտաշես Մխիթարյանի աշխատությունները, համահեղինակ եք «Հայ-վրացերեն զրուցարանի», հեղինակն եք նաեւ «Բալիկիս» մանկական գրքի ու խմբագիրը մանկական «Արե'ւ, մի քիչ շողիկ տուր» ժողովածուի: Եվ մեզ հայտնի է, որ այժմ Ձեր ձեռքի տակ է «Հայագիտությունը Վրաստանում» գիտական աշխատությունը. ե՞րբ եք մտադիր այն լույսընծայել:***

- «Հայագիտությունը Վրաստանում» գիտական աշխատությունը բավականին հետաքրքիր ու լուրջ աշխատանք է: Վեր է հանում հնուց ի վեր ու առ այսօր հայագիտական հարցերի շուրջ վրաց գիտական աշխարհի ցուցաբերած առանձնակի հետաքրքրությունը, 20-րդ դարի անվանի գիտնականներ, ակադեմիկոսներ Իվ.Ջավախիշվիլու, Ալ.Շանիձեի, Զ.Ալեքսիձեի, ինչպես նաեւ մեր ժամանակակիցների՝ երիտասարդ գիտնականներ Նինո Ափցիաուրու, Իվիկո Շիլակաձեի եւ այլոց հայագիտական խնդիրների շուրջ արծարծումները: Ընդգրկված են նաեւ վիրահայ հայագետներ, 20-րդ դարում գործող Լեւոն Մելիքսեթ-Բեկը, Արտաշես Մխիթարյանը: Աշխատությունը հայ-վրացական մշակութային կապերի յուրօրինակ փաստումն է: Առայժմ այն ձեռագիր վիճակում է, կարծում եմ՝ մոտ ապագայում ավարտին կհասցնեմ:

***- Ինչպիսի՞ն կուզենայիք լիներ վրաստանցի հայը:***

- Կուզեի, որ նա, իհարկե, բացի նրանից, որ պարտադիր տիրապետի վրացերենին, ու լավ գիտենա Վրաստանի պատմությունն ու աշխարհագրությունը, ժամանակակից գրականությունը, թատրոնը, երաժշտությունը, նաեւ գերազանց տիրապետի հայերենին, լավ իմանա հայոց պատմությունն ու մշակույթը եւ ոչ մի հարցում չզիջի Մայր հայրենիքում բնակվողին: Հենց այդ ամենով, Վրաստանում նա կունենա հաջողություններ, կլինի այս երկրի լիարժեք քաղաքացի բոլոր հարցերում, եւ այդ ամենով բարձր կպահի իր ազգի պատիվը:

***- Համալսարանի հայկական բաժնի լուծարումից հետո, Դուք կրթամշակութային գործունեությունը շարունակեցիք մայրենի լեզվով «Արեւիկ» մանկապատանեկան թերթի հիմնադրումով (2003թ.): Վերջերս «Արեւիկը» նշեց իր 100-րդ համարի լույսընծայումը. դա իրադարձություն էր ամսաթերթի համար եւ նշանակում էր անցած ճանապարհի գնահատում ու նոր մղումների սկիզբ: Այդ մոտեցումով, ինչպիսի՞ն է փորձում լինել առաջիկայում լույս տեսնող 101-րդ «Արեւիկը»:***

- «Արեւիկը» դեռ երկար անցնելիք ճանապարհ ունի... Ունի շատ մտահղացումներ թե' ձեւի եւ թե' բովանդակության առումով: Տա' Աստված, որ իրականացվեն դրանք:

***- Ձեր կարծիքով, հասարակության հետաքրքրությունը գեղարվեստական գրքի հանդեպ ինչո՞ւ է պակասել, եւ ի՞նչը կնպաստի այն վերականգնելուն:***

- Ըստ իս, գեղարվեստական գրականության հանդեպ հասարակության հետաքրքրության պակասելու պատճառն այսօրվա բարձր տեխնոլոգիաներն են, համակարգչի բերած հետաքրքրությունների բազմազանությունը, ինչը մարդուց շատ ժամանակ է խլում: Գրքի հանդեպ կորած հետաքրքրությունը կարող են վերականգնել միայն եւ միայն բարձրորակ, ժամանակին համահունչ գրված ստեղծագործությունները:

***- Դուք հիմնադիր-ղեկավարն եք «Վրաստանում հայկական գիտահետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպության. երկու խոսքով մասնավորեցրեք կազմակերպության նպատակը:***

- «Վրաստանում հայկական գիտահետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպությունը կոչված է պատրաստել գիտական կադրեր՝ հայ-վրաց գրական կապերի ոլորտում:

***- Ձեր կյանքի նշանաբանը, դեւիզը:***

- Եղի'ր բարի, մի' նախանձիր ոչ ոքի, սիրի'ր քո գործը, ընտանիքդ ու հայրենիքդ...

***- Եվ վերջում՝ Ձեր խորհուրդը մեր երիտասարդությանը:***

- Սիրելի' երիտասարդներ, միշտ ձգտեք բարձրին, ձեռք բերեք կայուն գիտելիքներ, եղեք ազնիվ ու բարի, բարձր պահեք ձեր ընտանիքի, ազգի ու երկրի պատիվը:

*Զրուցեց ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ*

ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐ

# ԱՅՍ ԱՆԳԱՄ ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑԱՆ ԵՐԳ, ՊԱՐ ՈՒ ԿԱՏԱԿՈՎ

***Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնն իրեն կարոտել չի տալիս: Ախալցիխեին ու մերձակա գյուղերին հաջորդում են Վրաստանի հայաբնակ մյուս քաղաքներն ու գյուղերը: Մենք զրուցեցինք երեկ Ծալկայի մունիցիպալիտետից վերադարձած թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի հետ, ով պատմեց օգոստոսի 24-27-ը Աշխալա, Նարդեւան, Դուշչի եւ Դզլքիլիսա գյուղերում կայացած հյուրախաղերի մասին:***



- Խաղացանկում նոր բեմադրություն էր՝ «Երգում, պարում, կատակում են ադամյանցիները»: Ներկայացումը նոր եւ ոչ ավանդական էր ադամյանցիների համար, թեեւ այնքանով հաջողված, որ այլեւս կդասվի խաղացանկում՝ ցուցադրվելով հետագայում եւս:

Համավարակը մեր թատրոնում դրական այս նորամուծությամբ կհիշվի նաեւ,- ասում է Արմեն Բայանդուրյանը:- Ախալցիխեի հյուրախաղերին մենք ներկայացանք Ավթանդիլ Վարսիմաշվիլու «Հրեշտակն ու երեք փողկապավորները» պիեսով: Իհարկե, ներկայացումը շատ լավ արձագանք ունեցավ, բայց ակնհայտ է, որ որպես բացօթյա, այն դերասանի կողմից լիարժեք մատուցվել եւ տարիքային բոլոր խմբերի համար հավասարապես ընկալելի լինել չէր կարող: Հանդիսատեսն ամբողջ գյուղն է՝ մեծից փոքր, ուստի, մտածել էր պետք նաեւ փոքրին հետաքրքիր լինելու համար: Շատ արագ բեմադրեցինք այսուհետ մեր խաղացանկում տեղ գտած «Երգում, պարում, կատակում են ադամյանցիները», որի առաջնախաղով ներկայացանք Ծալկայում: Ասեմ, որ եւս մեկ անգամ բացահայտեցի, թե որքան շնորհալի են մերոնք: Բեմադրության մեջ ընդգրկված էին Անժելա Ղազարյանը, Հենրիխ Պետրոսյանը, Նանո Պողոսյանը, Արամ Միքայելյանը, Լյուբա Սահակյանը, Նիկա Ղազարյանը, Մարիաննա Սահակյանը եւ Գագիկ Մելքումյանը: Համերգային-ժամանցային բացօթյա ծրագրի ընթացքում, մոտ 2 ժամ հնչեց ասմունք, երգ ու պար, հանդիսատեսը երգեց ու պարեց դերասանների հետ միասին, փոքրիկները մրցույթների մասնակցեցին, հաղթողները փոքրիկ մրցանակներ ստացան:

- Ուրախ ու ջերմ մթնոլորտ էր,- շարունակում է գեղղեկավարը:- Մի տեսակ ոչ միայն թատրոն-հանդիսատես կապն էր կարեւորվում, այլեւ պարզապես մեր երկարապաս հանդիպման անհրաժեշտությունը: Տեղացիները եւ մանավանդ՝ տարեցները, ում կապը, մայրաքաղաքի հետ, երեւի թե, այդքան էլ ակտիվ չէ, հետաքրքրվում էին ոչ միայն թատրոնի շենքի շինարարությամբ, այլեւ դպրոցներով, թերթով... ու, թեեւ «Վրաստան» թերթը սիրով կարդում են, զգացվում էր, որ ոչ միայն մեզ՝ թատրոնի դերասաններին, այլեւ ձեզ՝ խմբագրության լրագրողներին, տեսնելու անհրաժեշտություն ու ասելիք ունեն:

- Հյուրախաղային մեր հաջորդ կանգառը եւ հավանաբար հոկտեմբեր ամսին Ախալքալաքի, Նինոծմինդայի մունիցիպալիտետներում, ինչպես նաեւ Բաթումի քաղաքում են, հուսանք, այդ ժամանակ արդեն հնարավոր կլինի ներկայանալ թատրոնների ու կամ ակումբների ներսում:

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

ՆՈՐՈՒՅԹ

# ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՊԼԻԿԱՑԻԱ




***TBC-ի ապահովագրության ծրագրում նորամուծություն է: Առողջության ապահովագրությունից օգտվողները կարող են ստանալ նոր ապլիկացիա եւ իրենց սմարտֆոնների օգնությամբ թվայնորեն մի քանի րոպեի ընթացքում ստանալ ապահովագրական սպասարկումներ:***

Ապլիկացիայի միջոցով սպառողները կարող են դուրս գրել ընտանեկան բժիշկ, ստանալ աշխատավարձը կամ դրամաշնորհային ծանուցումը, ինչպես նաեւ ակտիվացնել ուղեւորական ապահովագրության համար նախատեսված օրերը:

Ընկերության նպատակն է, որպեսզի ապահովագրվածները ապլիկացիայի միջոցով ստանան այն սպասարկումները, որոնք լրիվությամբ նախատեսված են մարդկանց կարիքների կարգավորմանը եւ, ամենակարեւորը, որպեսզի առավելագույն արդյունավետությամբ ծախսեն քիչ ժամանակ:

Նոր ապլիկացիան կողմնորոշված է ապահովագրվածների վիճակի թեթեւացմանը եւ նախատեսում է ապահովագրական սպասարկումների առավել դյուրին ու արագ մատուցում:

Ապլիկացիայի ստացումը շատ դյուրին է, սպառողը IOS համակարգի համար օգտագործելու է APP Store, իսկ ANDROID համակարգի համար՝ Google Play-ը: Որոնման հարթակում գրանցելու է TBC, Insuranse կոճակի սեղմումով իրականացնելու է գրանցումը եւ ստանալու հրահանգը: Լրացուցիչ հարցերի դեպքում, 2 42 11 11 հեռախոսահամարով կարելի է կապվել TBC բանկի ապահովագրության բաժնի հետ:

# «ՄԵԳՐԵԼԱԿԱՆ ԹԵՅԸ» ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

***«Մեգրելական թեյ» ընկերության հիմնադիր Նանա Բիգվավան օգտվեց թեյի պլանտացիաների վերականգնման ծրագրից եւ Մարտվիլիի շրջանում 35 հեկտար տարածքի վրա վերականգնեց թեյի պլանտացիները: «Մեգրելական թեյը» արդեն երկրորդ տարին է, ինչ շուկային մատուցում է բարձրորակ թեյ:***




Նանա Բիգվավան գտնում է, որ, չնայած նրան, որ Վրաստանի շուկան հագեցված է ներկրած արտադրանքով, դեռեւս մեծ է վրացական բարձրորակ թեյի պահանջարկը, ուստիեւ, ֆերմերը ծրագրում է արտադրության ընդլայնում:

Իր տնօրինության տակ գտնվող պլանտացիաներից բացի, ընկերությունն ունի վերամշակման գործարան, որտեղ TBC-ի աջակցությամբ, ավելացրեց թեյահումքի ծավալը եւ այն գնեց տեղացիներից: Թեյի պլանտացիաներում աշխատում է շուրջ 50 մարդ, իսկ սեզոնին հավաքվում է 50-ից մինչեւ 60 տոննա թեյահումք:

«Մեգրելական թեյը» այս տարի առաջին անգամ արտահանվեց: Վերջերս 13 տոննա թեյ արտահանվեց Բելառուս: Ընկերությունն այդ ուղղությամբ եւս մտադիր է ընդլայնվել եւ մոտ ապագայում արտահանման երկրների ցուցակը կընդլայնի:

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑՈՒՄ ՊԵՏՔ Է ԴՆԵԼ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՆՇԱՁՈՂԸ»

*Օգոստոսի 25-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների հետ՝ հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանի գլխավորությամբ: Հանդիպմանը մասնակցում էր նաեւ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը:*



Հայկուհի Հարությունյանը հանդիպմանը նշեց, որ հանձնաժողովը գործում է ավելի քան 8 ամիս, եւ կազմավորումից ի վեր ողջ ներուժով ներգրավվել է առկա հենքի վրա իր գործունեության կազմակերպմանը: Մասնավորապես, որպես պետական ինստիտուտ՝ կառույցը ներգրավվել է քաղաքացիական ծառայության համակարգում, ներմուծվել են ներքին կանոնակարգումներ, որոնք նախկինում չեն եղել: Կատարվել է դատական համակարգի տարբեր օղակների բարեվարքության ստուգում, գործընթացը շարունակվելու է: Հանձնաժողովն առաջարկներ կներկայացնի բարեվարքության համակարգի ընդլայնման եւ ընդհանուր պետական կառավարման համակարգում դրա ներդրման կապակցությամբ: Ընթացքում են նաեւ մի շարք օրենսդրական փոփոխությունների առաջարկների մշակումը եւ այլ աշխատանքներ:

Վարչապետը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացուցիչների հետ մտքեր փոխանակեց հակակոռուպցիոն պայքարի օրակարգի շուրջ: Անդրադարձ եղավ հայտարարագրման համակարգի ինստիտուցիոնալ հենքի ձեւավորմանը, հանձնաժողով-իրավապահ համակարգ համագործակցությանը, էլեկտրոնային համակարգերի ներդրմանը, օրենսդրական բարեփոխումներին եւ այլ թեմաների: Քննարկվել են կոռուպցիայի կանխարգելման, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, հակակոռուպցիոն կրթության ու իրազեկման հարցեր:

# ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆԸ ԵՎ ՍԵՐԳԵՅ ՇՈՅԳՈՒՆ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՏԱՐԱՐԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

*Օգոստոսի 23-ին Հայաստանի պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը Մոսկվայում հանդիպում ունեցավ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի հետ:*

Հանդիպմանը կողմերը քննարկեցին տարածաշրջանային անվտանգության իրավիճակին եւ երկկողմ ռազմական համագործակցությանը վերաբերող հարցեր:

ՀՀ պաշտպանության նախարարն իր գործընկերոջը տեղեկացրեց հուլիսյան մարտական գործողություններից հետո տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական իրադրության, ինչպես նաեւ հայ-ադրբեջանական պետական սահմանին ու արցախա-ադրբեջանական ուժերի շփման գծում տիրող օպերատիվ իրավիճակի մասին:

Իր հերթին, ՌԴ պաշտպանության նախարարը կարեւորեց կայունության ամրապնդմանն ուղղված քայլերի իրականացումը բոլոր պետությունների կողմից:

Ընդգծելով հայ-ռուսական հարաբերությունների ռազմավարական դաշնակցային բնույթը՝ նախարարները քննարկել եւ պայմանավորվածություններ են ձեռք բերել ռազմական համագործակցության ուղղությամբ առաջիկա անելիքների շուրջ:

Նույն օրը Դավիթ Տոնոյանը մերձմոսկովյան «Պատրիոտ» ավանում մասնակցեց միջազգային բանակային վեցերորդ խաղերի եւ «Բանակ-2020» ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը:

# ԱՄՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՐ




*Միացյալ Նահանգների կառավարությունը՝ ԱՄՆ Պետդեպարտամենտի եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով, լրացուցիչ 1 միլիոն 436 հազար դոլար է հատկացրել Հայաստանին COVID-19-ի դեմ պայքարի համար:*

Ինչպես տեղեկացրին ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի առաքելությունից, ընդհանուր առմամբ, ԱՄՆ կառավարությունը Հայաստանին մոտ 4 միլիոն դոլարի հրատապ օգնություն է տրամադրել 2020 թվականին: Միացյալ Նահանգները տրամադրում է կենսական անհրաժեշտության աջակցություն՝ գործակցելով ՀՀ կառավարության, միջազգային մարդասիրական գործընկերների եւ այլ շահագրգիռ կողմերի հետ՝ բացահայտելու ներդրման կարիք ունեցող ոլորտներն ըստ առաջնահերթության:

ԱՄՆ ՄԶԳ-ն այս նոր՝ 1 միլիոն ԱՄՆ դոլարի օժանդակությամբ կաջակցի գյուղատնտեսության եւ զբոսաշրջության ոլորտներին տնտեսապես վերականգնվել համավարակից ու հարմարեցնել կարիքները հետկորոնավիրուսային աշխարհի իրողություններին:

Պետդեպարտամենտի կողմից տրամադրվող հավելյալ 436,000 դոլարը կհատկացվի այն խոցելի միգրանտների կարիքների բավարարմանը, որոնք համավարակի պատճառով չեն կարողանում վերադառնալ իրենց մշտական բնակավայրեր: Այս օժանդակության շնորհիվ, նրանք կունենան կացարան, մթերք, ինչպես նաեւ հնարավորություն՝ օգտվելու բժշկական եւ սոցիալական ծառայություններից:

Բացի COVID-19 համավարակի դեմ պայքարի համար տրամադրված վերոնշյալ աջակցությունից, անցած 20 տարիների ընթացքում Միացյալ Նահանգները Հայաստանում ներդրել է ավելի քան 1,57 միլիարդ դոլար, որից մոտ 106 միլիոն դոլարը՝ առողջապահության ոլորտում:

# ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է COVID-19-Ի 181 ՆՈՐ ԴԵՊՔ

## ԱՊԱՔԻՆՎԵԼ Է 276, ՄԱՀԱՑԵԼ՝ 5 ՔԱՂԱՔԱՑԻ



*Հայաստանի առողջապահության նախարարության Հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի տվյալներով, երեկվա՝ օգոստոսի 28-ի դրությամբ, Հայաստանում հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության ընդհանուր 43451 դեպք, որից 37264-ը՝ առողջացած:*

Կորոնավիրուսային հիվանդությամբ այս պահին փաստացի բուժում է ստանում 5052 բուժառու (պացիենտ): Վերջին 24 ժամում արվել է 1746 թեստավորում, իսկ ընդհանուր առմամբ՝ 202253 թեստավորում: Այսպիսով, կա կորոնավիրուսային հիվանդությամբ հաստատված 181 նոր դեպք եւ 276 առողջացած:

Ընդհանուր առմամբ, կորոնավիրուսային հիվանդությունից արձանագրվել է մահվան 869 (ավելացել է եւս 5-ով) դեպք:

Հայաստանի առողջապահության նախարարությունից մահվան ելքերի վերաբերյալ հայտնում են, որ բուժառուները եղել են 65 տարեկան տղամարդ եւ 53, 55, 65, 72 տարեկան կանայք: Բոլորն ունեցել են ուղեկցող քրոնիկական հիվանդություններ: Արձանագրվել է մահվան եւս 1 դեպք, երբ բուժառուների մոտ հաստատվել է կորոնավիրուսային վարակ, սակայն մահը վրա է հասել այլ հիվանդության պատճառով: Այդպիսի դեպքերի ընդհանուր թիվը 266 է:

Նշենք, որ Հայաստանի կառավարությունը օգոստոսի 12-ին որոշում է կայացրել Հայաստանում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված եւ մինչեւ օգոստոսի 12-ը երկարաձգված արտակարգ դրության ժամկետը օգոստոսի 12-ից երկարաձգել եւս 30 օրով՝ մինչեւ սեպտեմբերի 11-ը ներառյալ:

## ԵՐԵՎԱՆՈՒՄ ՇԵՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՓԼՈՒԶՈՒՄ՝ ԳԱԶԻ ՊԱՅԹՅՈՒՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

***Օգոստոսի 26-ին Երեւանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ռայնիսի 1 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքում գազի արտահոսքից տեղի է ունեցել պայթյուն, շենքը մասնակի փլուզվել է: Փլատակների տակից տարբեր մարմնական վնասվածքներով դուրս բերված երկու քաղաքացիները տեղափոխվել են հիվանդանոց: Դուրս է բերվել նաեւ նույն շենքի 3-րդ հարկի բնակիչ, 1962թ. ծնված Արթուր Գեորգիի Ղազարյանի դին:***

***Երեւանի քաղաքապետարանը Ռայնիսի փողոցի թիվ 1 քառահարկ պանելային բնակելի շենքի մասնակի փլուզման հետեւանքով բնակարանները կորցրած բոլոր 9 ընտանիքներին կացարան է տրամադրել Երեւանի հյուրանոցներից մեկում:***

## ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

***Օգոստոսի 27-ին Հայաստանի կառավարության նիստում հաստատվեց փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը եւ դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը:***

***Ռազմավարության նպատակը Հայաստանի ՓՄՁ-ների համար բարենպաստ միջավայրի ստեղծումն է՝ ձեռնարկատիրական հմտությունների զարգացման, գաղափարների իրագործման, մրցունակության բարձրացման միջոցով, որը հնարավորություն կտա նաեւ ապահովել ՓՄՁ-ների համար ներքին եւ արտաքին շուկաների հասանելիությունը:***

***Ռազմավարությամբ սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում, նախատեսվում է նպաստել ՓՄՁ-ների արտադրողականության աճին՝ 2020-2023թթ.-ի արտադրողականությունը բարձրացնելով 3, իսկ 2024 թվականին՝ 7,5տոկոսով: Մասնավորապես, ՓՄՁ-ներում մեկ զբաղվածի կողմից ստեղծված ավելացված արժեքը 2024 թվականին կկազմի 12 մլն ՀՀ դրամ, որը 2018 թվականի նույն ցուցանիշի գրեթե կրկնապատիկն է (2018թ. ցուցանիշը՝ 6,7 մլն ՀՀ դրամ): ՓՄՁ-ներում զբաղվածների թիվը կաճի տարեկան միջինում 2,5 տոկոսով:***

## ԱՎԵԼԱՑԵԼ Է ԱՇԽԱՏԱՎԱՐՁՈՎ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԹԻՎԸ

***Հայաստանում 2020թ. հուլիսի տվյալներով, աշխատավարձ ստացող աշխատատեղերի քանակը, նախորդ ամսվա համեմատ, ավելացել է շուրջ 3 հազարով: Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:***

***«2020 թվականի հուլիս ամսվա տվյալներով, աշխատավարձ ստացող աշխատատեղերի քանակը Հայաստանում կազմել է 613 հազար, նախորդ ամսվա 610 հազար 300-ի փոխարեն: Նույն ցուցանիշը 2019 թվականի հուլիսին եղել է շուրջ 607 հազար»,- գրել է Փաշինյանը:***

## ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅՈՒՄ

***Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշն այս տարվա հուլիսին, հունիսի համեմատ, աճել է 9,7 տոկոսով: Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով, կորոնավիրուսի համավարակի պայմաններում հուլիսին, հունիսի համեմատ, աճ են արձանագրել տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը:***

***Այս տարվա հուլիսին, հունիսի համեմատ, աճել են ինչպես արդյունաբերական արտադրանքի (1,4 տոկոսով), շինարարության (10,8 տոկոսով) ծավալները, առեւտրի շրջանառությունը (11,7 տոկոսով), մատուցված ծառայությունների ծավալը (0,9 տոկոսով), այնպես էլ արտաքին առեւտրաշրջանառությունը՝ 2,4 տոկոսով: Մասնավորապես, հուլիսին, հունիսի համեմատ, արտահանման ծավալն ավելացել է 1,5 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 2,9 տոկոսով:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՕԳՈՍՏՈՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ

***30.08.2020 Հիշատակ Սուրբ Աստվածածնի գոտու գյուտի***



Սուրբ Աստվածածնի գոտու գյուտը Տիրամոր ընծայված Հայ Առաքելական եկեղեցու յոթ տոներից է: Մի հանգամանք, որն ակնհայտ կերպով ցույց է տալիս Սուրբ Կույսի՝ հայ ժողովրդի հոգեւոր կյանքում ունեցած կարեւոր եւ նշանակալից տեղի ու դերի մասին:

***3.09.2020 Սուրբ Հովհաննես Կարապետի եւ Հոբ Արդարի հիշատակի օր***

***5.09.2020 Նիկիայի Սուրբ ժողովի 318 Հայրապետների հիշատակության օր***

Քրիստոսի եկեղեցու պատմության մեջ առաջին Տիեզերական ժողովը տեղի է ունեցել 325թ., Կոստանդիանոս Մեծ կայսեր հրամանով, Կ.Պոլսի մոտ գտնվող Նիկիա քաղաքում: Ժողովին մասնակցում էին Ընդհանրական եկեղեցու 318 նշանավոր հայրապետները: Շարժառիթն Ալեքսանդրիայի Արիոս անունով երեցն էր, որը քարոզում էր, թե Քրիստոս անսկիզբ չէ, այլ ստեղծվել է ժամանակներից ու դարերից առաջ Հայր Աստծո ցանկությամբ: Տիեզերաժողովում դատապարտվում է Արիոսի մոլար ուսմունքը՝ հայտարարելով այն հերետիկոսություն: Նիկիայի Ա Տիեզերաժողովին մասնակցում էր նաեւ Սուրբ Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակեսը: Ժողովի ընդունած դավանաբանական բանաձեւը, որը հայտնի է Նիկիական հանգանակ անունով, վերջինս Հայաստան է բերել, ներկայացրել հորը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչին, ով դրան ավելացրել է՝ «Իսկ մեք փառաւորեսցուք... » հատվածը: Նիկիայում ընդունված Հավատո հանգանակն ու Լուսավորչի ավելացրած հատվածը մինչեւ այսօր էլ անփոփոխ օգտագործում են Հայ եկեղեցու ծիսակարգում:

# ԱՐԱԳ ՏԵՄՊԵՐՈՎ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՄԵՐ ԹԱՏՐՈՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ



Չորս ամսվա ընդմիջումից հետո, «Վրաստանը» շարունակում է Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի նոր, ժամանակակից շենքի շինարարության ընթացքը վավերացնող լուսանկարների հրապարակումը: Այս համարում ձեր ուշադրությանն ենք ներկայացնում նույնիսկ համավարակով պայմանավորված ճգնաժամի պայմաններում շինարարության արագ ընթացքը վավերացնող, շենքի ընդհանուր տեսքն ու թատրոնի արտաքին տեսքի հենասյուները պատկերող լուսանկարները:

Հիշեցնենք, որ մեր թատրոնի նոր շենքի շինարարությունն իրականացվում է Բիձինա Իվանիշվիլու «Քարթու» հիմնադրամի տրամադրած շուրջ 19 միլիոն լարիի ֆինանսավորմամբ:

28.08.2020թ.



Ծրագրված է թատրոնի շենքի շինարարական աշխատանքները ավարտել 2020 թվականի վերջին:

*Լուսանկարները՝ ԳԱՐՐԻ ՄԱՆՈՅԱՆԻ*

ՆՈՐՈՒՅԹ

# ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՔՍԱԶԵՐԾՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎՈՒՄ Է ՄԻՆՉԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԸ

***Մեքենաների մաքսազերծումը հետաձգվում է մինչեւ 2021 թվականի մարտը: Համապատասխան կարգադրությունն օգոստոսի 13-ի կառավարության նիստում ստորագրեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան: Վարչապետի խոսքով, մինչեւ 2021 թվականի մարտը, մաքսազերծման հետաձգման համար հավելավճարներ չեն գովի:***

- Փաստ է, որ ճգնաժամի ազդեցությունը կլինի երկարաժամկետ: Ավտոմեքենաներ ներկրողները մի քանի անգամ դիմել են կառավարությանը: Ինչպես գիտեք, մեքենաների մաքսազերծման գործընթացը մեկ անգամ արդեն երկարաձգվել է: Ելնելով ֆինանսական տարվա շահերից՝ գերադասելի կլինի, եթե մաքսազերծումը երկարաձգենք մինչեւ 2021 թվականի մարտը: Դա կառնչվի մոտ 24 հազար մեքենաների սեփականատերերին: Ընդհանուր առմամբ, կերկարաձգվի ավելի քան 30 միլիոն լարիի հարկային արտոնություն,- հայտարարել է վարչապետը:

ՖՈՒՏԲՈԼ

# ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՄԵՐԸ, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԹԲԻԼԻՍԻԻ «ԼՈԿՈՄՈՏԻՎԻ», ԴՈՒՐՍ ՄՆԱՑԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԳԱՅԻ ՄՐՑԱՇԱՐԻՑ

Օգոստոսի 27-ին անցկացվեցին ֆուտբոլի Եվրոպայի լիգայի որակավորման փուլի հանդիպումները: Ցավոք, մրցաշարի մասնակից թե' Վրաստանի եւ թե' Հայաստանի թիմերը, Թբիլիսիի «Լոկոմոտիվի» բացառությամբ, որը սեփական հարկի տակ 2:1 հաշվով հաղթեց ռումինական «Կրայովա Ունիվերսիտատե» ակումբին, չկարողացան հաղթահարել առաջին փուլի պատնեշը:

Վրաստանի չեմպիոն Բաթումիի «Դինամոն» Իսրայելում 0:3 հաշվով զիջեց «Բեեր Շեւաա Հապոել» ակումբին, Թբիլիսիի «Սաբուրթալոն» նվազագույն 1:5 հաշվով զիջեց Կիպրոսի Լիմասոլ քաղաքի «Ապոլլոն» թիմին:

Որակավորման առաջին փուլում անհաջող հանդես եկան նաեւ Հայաստանի թիմերը: Հայաստանի փոխչեմպիոն եւ գավաթակիր «Նոահ» արտագնա խաղում 1:4 հաշվով զիջեց ղազախական «Կայրաթին», Գյումրու «Շիրակն» արտագնա խաղում 0:3 հաշվով պարտություն կրեց Բուխարեստի «Ստյաուայի» հետ մրցամարտում, իսկ «Ալաշկերտ»-ը Երեւանի Վազգեն Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտում ընդունեց Հյուսիսային Մակեդոնիայից «Ռենովա» թիմին եւ պարտվեց 0:1 հաշվով:

Այսպիսով, Վրաստանի եւ Հայաստանի թիմերը, Թբիլիսիի «Լոկոմոտիվի» բացառությամբ, դուրս մնացին Եվրոպայի լիգայի հետագա պայքարից:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Վահան Միրաքյանի երկերից՝ «...ի որսը»: 4.Լեռնաշղթա Հայաստանի Սյունիքի մարզում: 8.Եմենի քաղաքամայրը: 9.Եվրոպական պետություն: 12.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 13.Հովսեփ Վարդանյանի հայերեն տառերով թուրքերեն վեպը: 15.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 17.Ստալինյան բռնապետության զոհ հայ մեծ գրող: 19.Գաճաճ պետություն: 20.Լիճ Պատմական Հայաստանում, որի մոտ գտնվում է Վարագա լեռը: 21.Հնդկաստանի առաջին վարչապետ Ջավահարլար ...: 23.Սրահ, ուր պարում են: 27.Հուր, կրակ: 28.Իրաքի դրամական միավորը: 30.Ասիական պետություն: 32.Սահման, եզր չունեցող: 33.Վրաստանի խորհրդարանի պատգամավորության թեկնածու ... Վոլսկի: 34.Բառի վերջավորություն: 35.Ուկրաինայի հետման, խոշոր հողատեր Իվան ...: 39.Առաջին ձայնանիշը: 40.Ոտքի մաս: 43.Ճաշի համեմունք: 44.Մարզա..., պարա..., գեղեցկության ...: 46.Լինդերի հիվանդություն: 47.Նուրբ ու գեղեցիկ: 49.Բառի վերջավորություն: 50.Հայ մեծ առակագիր, «Դատաստանագրքի» հեղինակը: 51.Հայկական հեգաճկուն պար: 52.Կիսատ աճած, թերզարգացած:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Աֆրիկյան պետություն: 2.Րաֆֆու հերոսուհի: 3.Դերերգ օպերայում: 4.Հայկական համր ֆիլմ: 5.Կնոջ հայրը: 6.Անձնական դերանուն: 7.Երգեր գրող, կոմպոզիտոր: 10.Ռուս նշանավոր երգահան: 11.Սովորող, սան: 14.Օրվա մաս: 16.Անմարդկային, ստոր: 18.Ժխտական նախածանց: 19.Մի գնա (հակ.): 22.Սահմանագիծ, վերջ, ավարտ: 24.Վաքսուն վայրկյան: 25.Վրացուհու անուն : 26.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 28.Գետ Եվրոպայում: 29.Սրբադասված հայ տաղերգու: 30.Թբիլիսիում ծնված հայ օպերային երգիչ ... Հովհաննիսյան: 31.Ճակատամարտի դաշտ, ուր հայերը ջախջախիչ հարված են հասցրել թուրքական բանակին («Մխիթար Սպարապետ»): 36.Ֆրանսիացի հանրահայտ կոմպոզիտոր Ադոլֆ ...: 37.Մեծ եղեռնի զոհ հայ գրող, ում անվանել են «Նորավեպի իշխան»: 38.Թագավորանիստ քաղաք: 41.Սնամեջ բույս, այն երբեք չի խոնարհվում: 42.Ասորեստանի մայրաքաղաքը: 43.Դետեկտիվ գրող ... Քրիստի: 45.Վարսահարդարի գործիք: 48.Ործ ոչխար (բրբ.):

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 4.Շմիդտ: 7.Արտաշես: 9.Աջարիա: 10.Անհավատ: 13.Ցիտատ: 14.Վուհադի: 18.Վինկուր: 19.Երամակ: 22.Աղապակաս: 26.Եթեր: 27.Պողոտա: 28.Աբել: 31.Դիադեմա: 33.Աբեբա: 36.Կատարում: 38.Թարթառ: 41.Աճու: 42.Տնկի: 45.Ստել: 46.Բամբ: 49.Պիշ: 50.Ավիզ: 51.Աղանա: 52.Տնակ: 53.Կարս: 54.Տակ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ֆրանգ: 2.Տաքատ: 3.Լեգատ: 5.Մրջյուն: 6.Դերձակ: 8.Նախիր: 11.Հինա: 12.Վանա: 14.Վիշապ: 15.Հոտաղ: 16.Դուկատ: 17.Լեգենդ: 20.Մուրադ: 21.Կախեմ: 23.Պոչատ: 24.Կոկեր: 25.Սադամ: 29.Բերած: 30.Լակ: 32.Իմաստուն: 34.Բախտ: 35.Բուրկինա: 37.Այժմ: 39.Թալակ: 40.Ռուբիկ: 43.Նպատ: 44.Իշակ: 47.Ազա: 48.Բաս:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445